



ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆԵՐ

ԴՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱՌՆԱԿԵՐԵԱՆ  
Ե Հ

ԹԻՖԼԻԶԻ ՀԱՅՈՅ ԱՌԱՋՆՈՐԴ

ԳԵՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԹՈՒՆԵԱՆ  
ՀԱՆԳԵԱՆ ՚Ի ՏԷՐ

Առաջին՝ Խոկեսմբերի 31-ին խոկ Երևանողը նոյեմբերի 3-ին

## ԴՐԻՖՈՐ ԸՐՋԵԳԻՍԽՈՊՈՍ ԴԵՌՆԵԿԵՐԵՑՆՅՑ

Մայր Աթոռիս հինաւուրց միաբան Գրիգոր արքեպիսակոպոս Դառնակերեանը կարճատե հիւանդութիւնից յետոյ թոքերի բորբոքմամբ հոկտեմբերի 31-ին առաւօտեան 8 ժամին 78 տարեկան հասակում հանգաւ ի Տէր։ Հանգուցելոյ դին բնակարանից Տաճար փոխադրուեց նոյեմբերի 1-ին երեկոյեան ժամերգութիւնից առաջ, իսկ յուղարկաւորութեան և թաղման կարգը կատարուեց նոյեմբերի 2-ին. Ա. պատարագին նեկայ էր և Վեհափառ Հայրապետը Յուղարկաւորում էին ամբողջ միաբանութիւնը և ժողովրդի խուռն բազմութիւն։ Հանգուցելոյ մարմինը թաղուեց Միաբանութեան գերեզմանատանը։

Հանգ. Գրիգոր արքեպիսկոպոսը բնիկ Վաղարշապատացի՝ ուսել է Մայր Աթոռոյ ժառանգաւորաց դպրոցում. եկեղեցական երաժշտութեան և Ա. Գրոց մեծ հմտութիւն ունէր։

1855 թուին ստացել է դպրութիւն, 1861 թուին դեկտեմբերի 18-ին ձեռնադրուել էր սարկաւագ, 1862 թուի փետրվարի 25-ին՝ արեղայ. 1868 թուի հոկտեմբերի 3-ին ստացել է վարդապետական մասնաւոր և 1890 թուին հոկտեմ. 20-ին վարդ. ծայրագոյն աստիճանն նոյն հոկտեմբերի 21-ին ձառնադրուել է եպիսկոպոս, 1906 թ. ստացել է արքեպիսկոպոսական կոչումն։

Հանգ. Գրիգոր արքեպիսկոպոսը բացի մասնաւոր և ժամանակաւոր յանձնաբարութիւններից կատարել է հետզհետէ հետեւեալ պաշտօնները.

1862 թուին նշանակուել է Սուրբմալուի դաւառի բարեկարգիչ։

1863 թուի յունիսի 1-ին՝ կարգուել է ժառանգաւորաց դպրոցի վերակացու և եկեղեցական երգեցողութեան ուսուցիչ։

1864 թուի նոյեմբերի 1-ին կարգուել է երեսանի Հայոց կոնսիստորիայի անդամ։

1868 թուի յունուարի 1-ին կարգուել է Մայր Աթոռության Վանական կառավարութեան անդամ:

1874 թուի հոկտեմբերի 5-ին կարգուել է Հին-Նախիջևանի (Երև. նահանգ) առաջնորդական փոխանորդ.

1875 թուի օգոստոսի 25-ին նոյն պաշտօնով փոխադրուել է նույնի:

1878 թուի յունվարի 30-ին նոյն պաշտօնով փոխադրուել է Գորի:

1884 թուի յուլիսի 22-ին փոխադրուել է Ղզլար՝ հոգեսր կառավարութեան նախագահ և 1887 թուի ապրիլի 27-ին իւր խնդրի համեմատ արձակուելով յիշեալ պաշտօնից վերադարձել է Մայր Աթոռության վարուժ էր ժամօրհնողի պաշտօն:

1890 թուի հոկտ. 21-ին եպիսկոպոս ձեռնադրուելով կարգում է Երևանի Փոխ-Թեմակալ, որպիսի պաշտօնը վարում է մինչև 1892 թուի սեպտեմբերի 22-ը:

1896 թուի հոկտեմբերի 25-ից մինչև 1897 թուի յունուարի 22-ը վարում է Մայր Աթոռության գանձապահի պաշտօնը: 1900 թուի յուլիսի 20-ին բարձրագոյն բարեհաճութեամբ կարգում է Ղարաբաղի թեմակալ առաջնորդ, որպիսի պաշտօնը վարում է մինչև 1905 թուի փետրվարի 5-ը: Այնուհետև վերադառնալով Մայր Աթոռ 1906 թուին դնում է Երուսաղէմ և այցելելով Եգիպտոս ու Եւրոպայի նշանաւոր քաղաքները 1907 թուին վերադառնում է Մայր Աթոռության վարչութեան գործադրությունը:

Հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոսը իւր պաշտօնավարութեան ժամանակ վարձատրուել է Ս. Աննայի գ. կարգի շքանշանով, վարդապետական խաչով և ծաղկեալ փիլոնով:

Հանգուցեալ Գրիգոր արքեպիսկոպոսը բարեհամբոյր քնաւորութեամբ սիրելի և յարդելի էր միաբանութեան մէջ:

## ԳՐԵՒԹԻՒՆ ԸՐԱՎՈՒՄԿՈՎՈՅ ՍԵԹՈՒՆԵՐՆ

Հեռագիրը Թիֆլիզից գուժեց Վրաստանի և Խմերէթի հայոց թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսի մահը, որ տեղի է ունեցել նոյեմբերի 3-ին առաւօտեան 6 ժամին, սրտի կաթուածից։ Հանգուցելոյ մարմինը թաղուց վանքի աւագ եկեղեցու բակում համաձայն հրամանի Վեհ. Հայրապետի։

Գարեգին արքեպիսկոպոսը ծնուել է Աշտարակ գիւղում 1852 թուին, 1867 թուին մտել է Մայր Աթոռիս Ժառանչաւորաց դպրոցը, ուր աւարտելով ուսման ընթացքը 1872 թ. փետրվարի 19-ին ստացել է դպրութեան առաջնան դասուելով Մայր Աթոռիս միաբանութեան կարգը։

1873 թուի մայիսի 15-ին ձեռնադրուել է սարկաւոգ։

1876 թուի նոյեմբերի 21-ին ձեռնադրուել է արեղայ։

1878 թուի մայիսի 18-ին ստացել է վարդապետական ժամանակը իշխանութիւն։

1901 թուի մայիսի 13-ին ձեռնադրուել է եպիսկոպոս և 1907 թուին ստացել արքեպիսկոպոսութեան տիտղոս։

Վարել է հետեւալ պաշտօնները։

Սինօգի հրամանով 1879 յունվարի 10-ին կարգուել է Մայր Աթոռոյս Վանական կառավարութեան անդամ, արձակուելով նոյն պաշտօնից։

1882 թուի յունվարի 28-ին կարգուել է Գորու փուլանորդ, 1883 թ. յունուարի 10-ին նոյն պաշտօնով փոխադրուել է նուխի. 1884 թուի սեպտեմբերի 18-ից սկսած վարել է նոյն փոխանորդութեան մէջ թեմական տեսչի օգնականի պաշտօնն էլ։

1887 թուի յունիսի 9-ին տեղափոխուել է Նոր Նախիջևան հոգե. կառավարութեան նախագահ և նոյն թուի սեպտեմբերի 22-ից սկսած վարել է նոյն շրջանի թեմական տեսչի օգնականի պաշտօնը։ Իւր խնդրի համեմատ 1889 թ. սեպտեմբերի 2-ին արձակուել է նոր նախիջևանում ունեցած պաշտօններից։

1890 թ. փետր, 28-ին նշանակուել է Ալէքսանդրա-

սլոլի փոխանորդ և 1892 թուի սեպտեմբերի 22-ին արձակությով պաշտօնից վերադարձել է Մայր Աթոռու ի միաբանակցութիւն.

1894-ին նշանակուել է Գանձակի փոխանորդ:

1895 թ. յունվարի 27-ին Հանգ. Մկրտիչ Կաթուղիկոսի կոնդակով նշանակուել է Ղարաբաղի թեմի կառավարիչ և 1897 թուի սեպտեմբերի 17-ին արձակուել է պաշտօնից:

1901 թուին Հանգ. Մկրտիչ Կաթուղիկոսի կոնդակով նշանակուել է Ստանահնի գանքի գանահայր:

1904 թ. օգոստոսի 10-ին ըստ առաջարկութեան հանգ. Մկրտիչ Կաթուղիկոսի Բարձրագոյն հաստատում է Վրաստանի և Խմերեթի Հայոց թեմի առաջնորդ և այդ պաշտօնումն էլ կնքեց իւր բազմավաստակ կեանքը յիսուն և ութ տարեկան հասակում:

Իւր պաշտօնավարութեան ժամանակ վարձատրուել է

1881 թուի սեպտեմբերի 22-ին վարդապետական լանջախաչով, 1883 թուին՝ ծաղկեայ Փիլոնով, 1901 թուի մայիսի 14-ին եպիսկոպոսական պանդէով:

1907 թուի յուլիսի 3-ին Ա. Ստանիսլուի Լ. կարգի ձքանշանով:

Վեհափառ Հայրապետը հանդուցեալ Գարեգին արքեպիսկոպոսի թաղման ներկայացուցիչ կարգեց Արքոգի անդամ Տ. Մեսրոպ եպիսկոպոսին:

Հանդուցեալ Գարեգին արքեպիսկոպոսը շինարար պաշտօնեայ էր,—Սլքասանդրապոլի յաջորդարանի շինութիւնը և Սանահնոյ գանքի նորոգութիւնը Գարեգին սրբազնի մըշտնջենական միշտառակը կը մնան: Նա ցոյց տուեց վարչական ընդունակութիւն Վրաստանի և Խմերեթի Հայոց ընդարձակ թեմը կառավարելով այնպիսի ժամանակում, որպիսին էր 1904—1907 թ. թ. և այնուհետեւ:

Սգալով մեր արդիւնաւոր միաբանակիցների մահը, ազօթում ենք, որ Աստուած Նրանց ի լոյս երեսաց իւրոց հանգուցանէ: Ամէն: